ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 10-11-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, գումարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական ժողովը:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, ապա Նորին Սրբությունը ողջույնի խոսքով դիմեց ժողովականներին՝ մաղթելով նրանց Ս. Հոգու առաջնորդությունը ժողովի աշխատանքներում: Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը կարևորեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առջև ծառացած հրատապ խնդիրների շուտափույթ լուծումը:

Ժողովի ատենապետեր ընտրվեցին Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը:

Նիստի սկզբնավորությանը Նորին Սրբությունը ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2004 թ. գործունեության հաշվետու զեկույցը՝ անդրադառնալով եկեղեցական, հոգևոր-մշակութային, ընկերային, քարոզչական, եկեղեցաշինության, եկեղեցականների պատրաստության և կարևորագույն այլ ոլորտներում իրականացված ծրագրերին և արձանագրված արդյունքներին:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը մտահոգությամբ անդրադարձավ Վրաստանում առկա վիճակին՝ կապված Վիրահայոց թեմի կարգավիճակի և հայկական եկեղեցիների ու վանքերի նկատմամբ դրսևորվող ոտնձգությունների հետ: Քննարկումների արդյունքում որոշվեց եկեղեցական և պետական մակարդակներով շարունակել հետամուտ լինել հիշյալ խնդիրների բարվոք լուծմանը:

Քննության առնվեց նաև ինչպես Հայաստանում, այնպես և տարբեր երկրներում հայոց թեմերի իրավական կարգավիճակին առնչվող խնդիրներ: Կարևորությամբ ընդգծվեց թեմերում նույնական կանոնադրություններ ունենալու անհրաժեշտությունը, որ մեծապես նպաստելու է թեմերում ազգային-եկեղեցական կյանքի առավել կազմակերպմանն ու բարեկարգմանը:

Հայոց ցեղասպանության 90-ամյա տարելիցի միջոցառումների մասին զեկուցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը: Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը ժողովականներին ներկայացրեց Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի հոբելյանի առիթով կազմակերպվող միջոցառումները:

Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը ներկայացրեց միջեկեղեցական հարաբերությունների ոլորտում քույր Եկեղեցիների հետ համագործակցության արդյունքները, ինչպես նաև անդրադարձավ 2006 թ. Բրազիլիայում գումարվելիք ԵՀԽ համաժողովին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու մասնակցությանը:

Գերագույն Հոգևոր Խորհուրդն անդրադարձավ նաև Թեմական ներկայացուցչական հերթական հավաքի կազմակերպմանը:

Ժողովը փակվեց «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ